

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՕՎՍԱՆՆԱ ՍԵՆԻԿԻ

**ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵԼԱԴԱՐԱՆԻ
ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ**

**Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Աելիտա Գուրգենի Դուլիսանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Սամվել Պարզևի Մուրադյան**
բանասիրական գիտությունների թեկնածու
Հերիքնազ Վանիկի Որսկանյան

Առաջատար կազմակերպություն՝ Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ


Պաշտպանությունը կայանալու է 2025 թ. փետրվարի 21-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուրար՝

բանասիրական գիտությունների թեկնածու՝  **Ս. Ա. Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ԺԲ-ԺԵ դարերում գրված և ընդօրինակված ձեռագրերում տեղ գտած միջնադարյան գրական ժանրերի ուսումնասիրությանը: ԺԲ-ԺԵ դարերում մշակութային կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություն էր մտածողության **աշխարհականացումը**, որը մասամբ սկսվել էր դեռևս ԺԱ դարի առաջին կեսից՝ գրականության, արվեստի, ինչպես նաև հասարակական մտածողության այլ բնագավառներում. այն նկատելի է դառնում և ավելի խորանում ԺԲ-ԺԳ դարերում:

Գրականության վերածնության շրջանը նշանավորվեց նոր ժանրերի ստեղծումով, որոնցում գերիշխում է աշխարհիկ տարրը, հոգևոր թեմաներին զուգահեռ սկսեցին ստեղծվել նաև արտակերպական խրատներ, տաղեր, բանբեր:

ԺԲ-ԺԵ դարերի հայկական մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունների այս շրջանում գրվել և ընդօրինակվել են հայերեն ձեռագրեր, որոնք պարունակում են հայ միջնադարյան գրականության տարբեր ժանրեր: Այս ժանրերի մեծ մասը համակողմանի ուսումնասիրված են, սակայն կան դեռևս չուսումնասիրված հարցեր: Հետազոտության ընթացքում անդրադարձել ենք այն ժանրերին, որոնք քիչ ուսումնասիրված են կամ ձեռագրերում ունեն յուրահատուկ դրսևորումներ. կաՖան՝ Գանձարաններում, հանելուկը՝ Հայսմավուրքներում, հիշատակարանի և գրառաջքի ժանրային առանձնահատկությունները:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության **նպատակն** է հիմնականում ձեռագիր, ինչպես նաև տպագիր սկզբնաղբյուրիների և ուսումնասիրությունների միջոցով, համադրական, համեմատական վերլուծության մեթոդով առանձնացնել ԺԲ-ԺԵ դարերում ընդօրինակված ձեռագրերում եղած հայ միջնադարյան գրականության ժանրերը, քննության ենթարկել ուսումնասիրված ժանրերի դեռևս չուսումնասիրված դրսևորումները և առանձնահատկությունները ձեռագրերում, սահմանել համակողմանի չուսումնասիրված գրական տեսակների ժանրային առանձնահատկությունները:

Ատենախոսության **խնդիրներն** են.

1. Քննել Հայսմավուրք ժողովածուում երկու ժանրերի՝ վարքի և հանելուկի մի բնագրի մեջ հանգես գալը, ժանրային առնչությունների հարցը, պարզել հանելուկի կիրառության նպատակը այդ ժողովածուներում:

2. Գանձարանային կաՖայի ժանրային հատկանիշների վերհանումը՝ զանձկաՖա ժանրային առնչությունների քննությունը:

3. Պարզել կաՖաների՝ Գանձարան ժողովածու ներմուծողի, ժամանակի և հեղինակների հարցերը:

4. Հիշատակարանի ժանրային առանձնահատկությունների վերհանումը որպես հայ միջնադարյան գրականության մեջ իր ուրույն տեղը ունեցող ժանր:

5. Ցույց տալ կաղապարային հիշատակարանների կարևորությունը զանազան ձեռագրագիտական հարցեր պարզելու տեսանկյունից:

6. Կատարել գրառաջքի ժանրի համակողմանի քննություն, վեր հանել գրառաջքի ժանրային առանձնահատկությունները՝ ցույց տալով հայ միջնադարյան գրականության մեջ այդ տեսակի՝ որպես ժանրի գոյությունը:

7. Քննել գրառաջք-հիշատակարան ժանրային առնչությունները:

8. Մաշտոցի անվան Մատենադարանի (որպես հայերեն ամենամեծ ձեռագրական հավաքածուի) ձեռագրերի օգնությամբ պարզել ժԲ-ԺԵ դարերի ձեռագրերում հայ միջնադարյան գրականության ժանրային ընդհանուր պատկերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմայի **արդիականությունը** կապված է միջնադարյան մի քանի ժանրերի լայն ըմբռնման՝ այլ ժանրերի սահմաններում հանդես գալու հետ: Մասնավորապես կաֆայի և հանելուկի, գրառաջքի և հիշատակարանների ձեռագրական համակարգված քննությունը թույլ է տալիս միջնադարյան ժանրերի կիրառական ոլորտը դիտարկել ավելի լայն՝ թեմատիկ և դիդակտիկ սահմաններում, և ցույց տալ, որ միջնադարյան գրական գործընթացը, չնայած ժանրային կանոնիկությանն ու քրիստոնեական «էթիկետի» (Դ. Լիխաչովի եզրույթն է) պահպանմանը, փոփոխական և զարգացող բնույթ ուներ:

Թեման ունի **կիրառական և գործնական** նշանակություն: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հայագիտության բնագավառում՝ հետագա ուսումնասիրությունների ժամանակ, հատկապես հայ միջնադարյան գրականության ժանրերին վերաբերող հետազոտություններում: Ատենախոսության եզրակացությունները կարող են ընդգրկվել բուհական ծրագրերում, հատկապես՝ «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն» կամ «Հայ գրականության պատմություն» դասընթացների ծրագրերում:

Հայ միջնադարյան գրականության վերոնշյալ ժանրերի վերաբերյալ մինչ օրս կատարված աշխատանքները գնահատելի են մեզ համար, որոնցից էլ մեծապես օգտվել ենք: Ձեռնամուխ լինելով նշված ժանրային համակարգում բաց թողնված կամ համակողմանի չուսումնասիրված խնդիրների լուծմանը, բնականաբար, չենք կարող սահմանափակվել միայն սույն ատենախոսությամբ. հատկապես նորահայտ բնագրերի հրատարակումը ապագայի կատարելիք աշխատանք է:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

ԺԲ-ԺԵ դարերում շարունակվում են ստեղծվել ձեռագիր մատյաններ, գրվել և ընդօրինակվել հայ միջնադարյան գրականության տարբեր ժանրերի պատկանող ստեղծագործություններ: Այս շրջանում դեռևս իշխում էին հոգևոր թեմաները և ընդօրինակված ձեռագրերի մեծ մասը Ավետարաններ, Ճառընտիրներ, Ճաշոցներ, Մաշտոցներ, Շարակնոցներ են, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը, կան նաև Ժողովածու կոչվող ձեռագրեր, որոնք պարունակում են տաղեր և գանձեր, թղթեր, հանելուկներ ու կաֆաներ, ինչպես նաև պատմագրության և այլ ժանրերի երկեր:

Եթե անգամ չանդրադառնանք աշխարհի տարբեր անկյուններում պահվող հայերեն ձեռագրերին, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերը բավական են պատկերացում կազմելու ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում ընդգրկված ժանրերի մասին և ներկայացնելու այդ ձեռագրերում ժանրային ընդհանուր պատկերը, որը և համապատասխանում է վերոգրյալ պնդմանը, այսինքն՝ դեռևս իշխող են հոգևոր թեմաները, բայց խորանում էր աշխարհիկ տարրը:

Այսպես, ԺԲ-ԺԵ դարերում գրված և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 400-ից ավելի ձեռագրեր պարունակում են հայ միջնադարյան գրականության տարբեր ժանրերի պատկանող երկեր, որոնք ունեն գեղարվեստական արժեք. **պատմագրության, վարք-վկայաբանության ժանրին պատկանող երկեր, թղթեր, շարականներ, ներբողներ, տաղեր և գանձեր, առակներ, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը, հանելուկներ:**

ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերի ժանրային հիմնական համակարգում նկատեցինք այնպիսի ժանրեր, որոնք չնայած համակողմանի ուսումնասիրված են, սակայն ունեն ձեռագրական յուրահատուկ դրսևորումներ: Այդ ժանրերն են **հանելուկը և կաֆան**, որոնք ստեղծելով ժանրային զուգադրումներ Հայսամվուրք և Գանձարան ժողովածուներում՝ դեռևս ունեն ուսումնասիրության կարիք, որին էլ ձեռնամուխ եղանք այս աշխատանքով:

Հայ ժողովրդական հանելուկները ուսումնասիրել է Սարգիս Հարությունյանը, իսկ հեղինակային հանելուկները մանրամասն քննել է Ասատուր Մնացականյանը՝ անդրադառնալով հայ միջնադարյան հանելուկների հրատարակման պատմությանը և սկզբնաղբյուրների տեսությանը, հանելուկների սկզբնավորմանը, հայ միջնադարյան հանելուկների դասական շրջանին, հանելուկների «մասսայականացմանն ու աստիճանական տեղատվությանը»։ Վերջինում որպես աղբյուր նշում է նաև Հայսամվուրք ժողովածուները, որոնց միջոցով մեզ են հասել հանելուկները:

Մենք առաջին անգամ քննել ենք հանելուկի ժանրը Հայսամվուրք ժողովածուում՝ ցույց տալով երկու ժանրերի՝ հանելուկի և վարքի զուգադրումը, որոնք ոչ պատահական հայտնվելով նույն ժողովածուում, կապված են միմյանց, սակայն չեն ձուլվում, փոխներթափանցման փորձ անգամ չեն կատարում՝ ունենալով որոշակի գործառույթ:

Կաֆայի գրական տեսակն առաջին անգամ ներկայացրել է **Ղևոնդ Ալիշանը** իր «Սիտան» հատորում, ապա անդրադարձել են Հակոբյու Տաշյանը, տարբեր առիթներով այս ժանրին անդրադարձել են նաև Կարապետ Կոստանյանը, Արշակ Չոպանյանը, Գարեգին Հովսեփյանը, Մանուկ Աբեղյանը, Ասատուր Մնացականյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ: Կաֆաների աղբյուրագիտական-գրականագիտական ամփոփ քննությունը կատարել է **Հասմիկ Սիմոնյանը**՝ լույս ընծայելով «Հայ միջնադարյան կաֆաներ (X-XVI դդ.)» ուսումնասիրությունը: Տարբեր գիտնականներ ևս հպանցիկ անդրադարձել են նաև գանձարանային կաֆաներին, կարծիքներ հայտնել դրանց կաֆա լինելու վերաբերյալ՝ չունենալով միասնական տեսակետ, որ դրանք կաֆաներ են: Մենք քննել ենք գանձարանային կաֆայի ժանրային հատանիշները, բացահայտել դասական և գանձարանային կաֆաների

Ժանրային նույնությունը, վեր հանել գանձ-կաֆա առնչությունները, պարզել կաֆաների՝ Գանձարան ժողովածուում հայտնվելու ժամանակի, գանձարանային կաֆաների հեղինակների հարցերը:

ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում գոյություն ունեն այլ ժանրեր ևս, որոնք, իհարկե, գրավել են մասնագետների ուշադրությունը, սակայն որպես հայ միջնադարյան գրականության առանձին ժանրեր դեռևս համակողմանի (այսինքն՝ ժանրային առանձնահատկությունների հստակ սահմանմամբ) ուսումնասիրված չեն. դրանք են **ձեռագրի հիշատակարանները** և **գրառաջքները**, որոնց պայամանականորեն կանվանենք «կիսանկախ» և «կախյալ» ժանրեր:

ԺԲ-ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի մեծ մասն ունի հիշատակարաններ: Այս հիշատակարանները հրատարակված են առանձին հատորներով, որոնք ունեն շատ կարևոր առաջաբան-ուսումնասիրություններ: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների մասին կան մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ, որոնցում հիշատակարանն ուսումնասիրված է որպես գրական հյուսվածք, գրական տեսակ: Մենք անդադարձել ենք այս գրական տեսակին, որպես հայ միջնադարյան գրականության ժանր («կիսանկախ ժանր»)՝ վեր հանելով հիշատակարանի ժանրային առանձնահատկությունները առանձին-առանձին: Քննել ենք կաղապարային հիշատակարանները, որպես հիշատակարանների կարևոր տեսակ և առանձնահատկություն՝ վեր հանելով վերջիններիս գեղարվեստական և կարևոր արքյուրագիտական նշանակությունը:

Գրառաջքները ձեռագիր մատյաններում նկատելի և առաջին անգամ գիտական քննության է ենթարկել գրականագետ Աելիտա Դուլիսանյանը իր՝ ««Գրառաջքները» հայ միջնադարյան մատենագրության մեջ» հոդվածով (որից և մեծապես օգտվել ենք) և եզրահանգել, որ գրառաջքները իրենց ստեղծագործական առանձնահատկություններով արձակ և չափածո փոքրածավալ **ներբողներ** են, որոնց կարելի է անվանել ենթաժանր: Իսկ մինչ այդ՝ այս գրվածքները չէին արժանացել գրականագետների պատշաճ ուշադրությանը:

Մենք համակողմանի ուսումնասիրել ենք գրառաջքի գրական տեսակը՝ վեր հանելով վերջինիս ժանրային առանձնահատկությունները, ցույց տալով հայ միջնադարյան գրականության մեջ այդ տեսակի՝ որպես «կախյալ» ժանրի գոյությունը: Առաջին անգամ քննել ենք գրառաջք-հիշատակարանների ժանրային առնչությունների հարցը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Աշխատանքը շարադրված է **պատմահամեմատական, համադրական վերլուծության** մեթոդներով: Ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրների, հրատարակված ուսումնասիրությունների միջոցով փորձել ենք վեր հանել ուսումնասիրված ժանրերի դեռևս չուսումնասիրված առանձնահատկությունները և դրսևորումները, քննել և դասակարգել համակողմանի չուսումնասիրված գրական ժանրերի ժանրային առանձնահատկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Էսաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլվել են հրատարակված ութ հոդվածներում, ինչպես նաև մի շարք միջազգային ու հանրապետական գիտաժողովներում և աշխատաժողովներում ներկայացված զեկույցներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: **Առաջին գլուխը** («Հանելուկը և կաֆան որպես ձեռագրական յուրահատուկ դրսևորումներ ունեցող ժանրեր ժՐ-ԺԵ դարերի ձեռագրերում») բաղկացած է երկու ենթագլխից, **երկրորդը** («Ձեռագրի հիշատակարանը որպես միջնադարյան գրականության ժանր (ժՐ-ԺԵ դարերի ձեռագրերում)»)՝ նույնպես երկու ենթագլխից, **երրորդը** («Գրառաջքի գրական տեսակը որպես միջնադարյան գրականության ժանր (ժՐ-ԺԵ դարերի ձեռագրերում)»)՝ երեք ենթագլխից, և **չորրորդը** («Միջնադարյան այլ գրական ժանրերը ժՐ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում (ընդհանուր բնութագիր)»)՝ երեք ենթագլխից: Եզրակացություններում տրված են աշխատանքում քննության ենթարկված թեմաների վերջնարդյունք-եզրահանգումները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում է ատենախոսության ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը, մշակվածությունն ու գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կառուցվածքը: Տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՆԵԼՈՒԿԸ ԵՎ ԿԱՖԱՆ ՈՐՊԵՍ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԺԱՆՐԵՐ ԺՐ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Հայ միջնադարյան գրականության մեջ կարևոր նշանակություն ունեցող և համակողմանի ուսումնասիրված երկու ժանրեր՝ հանելուկը և կաֆան, ձեռագրերում բացի իրենց սովորական դրսևորումներից և գործառույթից, ունեն նաև յուրահատուկ դրսևորումներ և գործառույթներ: Հանելուկի ժանրը ոչ միայն առանձին շարքերով և տարբեր բնույթի ժողովածու կոչվող ձեռագրերի միջոցով է մեզ հասել, այլև Հայսմավուրք ժողովածուների՝ զուգադրվելով վարքի ժանրին, իսկ կաֆայի ժանրը, ի սկզբանե լինելով արձակ երկերում, հայտնվել է նաև Գանձարան ժողովածուում՝ զուգադրվելով գանձին: Հանելուկը և կաֆան զուգադրվելով այս

ժանրերին՝ և՛ պահպանել են իրենց ժանրային առանձնահատկությունները, և՛ կատարել են որոշակի գործառույթ՝ առավելապես գեղարվեստականություն հաղորդելով զուգադրվող ժանրերին:

1. 1. **Հանելուկի ժանրը Հայսամվուրք ժողովածուներում**

Ըստ ծագման հանելուկները բաժանվում են երկու խմբի՝ **ժողովրդական-բանահյուսական**, որոնցում իշխել են աշխարհիկ կյանքին վերաբերող թեմաները, և **հեղինակային**, որոնցում զգալի են եղել հոգևոր թեմաները: Ժողովրդական հանելուկները փոխանցվել և մեզ են հասել բերնաբերան, անհատականները՝ ձեռագիր մատյանների միջոցով, ընդ որում ոչ միայն ժողովածու կոչվող տարբեր ձեռագրերի (որոնք գրված են ԺԲ-ԺԵ և հետագա դարերում), այլև Հայսամվուրք ժողովածուների միջոցով:

Հայսամվուրք ժողովածուն Հայ եկեղեցու ծխազրքերից մեկն է, պարունակում է տարվա յուրաքանչյուր օրը նահատակված սրբերի վկայաբանություններն ու վարքերը: Ուշագրավ է հատկապես Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրությունը, որտեղ խմբագիրը աշխատել է ժողովածուն դարձնել առավել ժողովրդական. ներմուծել է զանազան իրական պատմություններ, ոչ հայսամվուրքային և բանահյուսական նյութեր, ավելացրել զանազան ժամանակակիցների, ինչպես նաև պատմական անձնավորությունների վարքեր ու վկայաբանություններ՝ դարձնելով այն իսկական պատմական սկզբնաղբյուր հայ ժողովրդի համար:

Մեր կարծիքով, Հայսամվուրքներում հանելուկներ գրելու ավանդույթի հիմնադիրը կա՛մ Ծերենց խմբագիրն է, կա՛մ, հնարավոր է, մի որևէ գրիչ (Ծերենցի խմբագրած Հայսամվուրքներում գրիչները կարող էին ազատ ներմուծումներ անել), որից հետո տարբեր գրիչներ շարունակել են ավանդույթը:

Այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանի Հ⁴⁰ (այսուհետ՝ ՄՄ) **6224** ձեռագիր Հայսամվուրքում՝ Եփրեմ Ասորու վարքից հետո, որպես նյութի ավարտ, կա մի հանելուկ, որի պատասխանը իհարկե «Եփրեմ» է.

Վայրի քօշիկ մի կայր **քարծուկ**,

Անուշահոտ և սպըրկուկ,

Ի **յԱսորիս** եղև նա տունկ

Բաներ ասաց շատ մի դիպուկ¹:

Հայսամվուրքի վարքում Եփրեմ Ասորու արտաքինը այսպես է նկարագրված՝ «Էր սուրբն Եփրեմ թըխամորթ՝ **քարծ** եւ լալետր. ծաղր երես եւ լի շնորհօքն Աստուծոյ»², իսկ վարքի հենց սկզբում ասվում է, որ սուրբ հայրը և ճշմարտության վարդապետը, աբբա Եփրեմ Խորին **Ասորին** Ամիդ քաղաքից էր (269բ): Բառերի այս նմանությունն էլ միայն հուշում է, որ հեղինակը ծանոթ է եղել վարքին:

Հայսամվուրքներում օբյեկտիվն (էպիկական-պատմողականը) ու գեղարվեստականը (այլաբանականը) հանդես են եկել միաժամանակ, բայց ոչ միաձույլ. վարքի հիմքում հիմնականում օբյեկտիվն է, որովհետև վարք-վկայաբանությունները

¹ ՄՄ 6224, 185բ (նույնը՝ ՄՄ 6299, 177բ):

² Նույն տեղում:

(սրբախոսություններ, հագիոգրաֆիա) առանձին-ինքնուրույն ժանրեր են, հետագայում պատմագրությանից առանձնացած քրիստոնեական գրականության հնագույն տեսակներից, իսկ գեղարվեստականը հանելուկն է, որն ունի բանախյուսական ծագում և դիպուկ բնորոշումներով վերհանում է կերպարը:

Հայսմավուրքային հանելուկները երբեք վարքի կամ Հայսմավուրք ժողովածուի մաս չեն կազմել, ունենալով գրական-գեղարվեստական արժեք թարմացրել են ընթերցանությունը՝ այն դարձրելով ավելի գրավիչ: Հանելուկները Հայսմավուրք ժողովածու ներմուծող հեղինակը նպատակ է ունեցել այդ միջոցով ընթերցողի համար դյուրին դարձնել վարքի ընկալումը, ինչպես նաև ցույց տալ երկու **ժանրերի զուգադրումը**, միևնույն կերպարի (երկուսի գլխավոր հերոսն էլ նույն սուրբն է) գրական-գեղարվեստական ընկալումը՝ տարբեր ժանրերի միջոցով, որոնք ոչ միայն չեն ձուլվում, այլև փոխներթափանցման փորձ անգամ չեն կատարում:

1. 2. Կաֆայի ժանրը Գանձարան ժողովածուներում

Կաֆան հայ միջնադարյան գրականության յուրահատուկ բանաստեղծական տեսակ է, որը որպես ժանր ձևավորվել և զարգացել է Ժ-ԺԶ դարերում (առանձին դեպքերում ձգվելով մինչև ԺԷ-ԺԸ դդ.):

Գանձարան ժողովածուները բաժանվում են երեք հիմնական խմբերի կամ խմբագրությունների՝ նախախլաթեցիական, խլաթեցիական և հետխլաթեցիական:

ա. Գրիգոր խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ

Գանձարան ժողովածուի կանոնը հիմնականում ունի հետևյալ կառուցվածքը՝ **գանձ-տաղ-փոխ** (կախված կանոնի կառուցվածքային և այլ առանձնահատկություններից շղթայի մաս կարող են կազմել նաև **մեղեդին** ու **հորդորակը**). այստեղ գլխավոր միավորը գանձն է, որին էլ նվիրված են խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության Գանձարաններում եղած կաֆա կոչվող բանաստեղծությունները, որոնք սովորաբար գրված են լինում գանձից առաջ:

Առանձնացնելով և ուսումնասիրելով Գանձարան ժողովածուների մեծ մասը՝ պարզեցինք, որ գանձարանային կաֆաների հնագույն նմուշները պահպանված են ՄՄ 4011 Գանձարանում (ԺԵ դար), որը խլաթեցու ինքնագիրը չէ, բայց արտագրված է 1399-1400 թթ. նրա գրած մի Գանձարանից³, որտեղ կաֆաներից մեկում հեղինակը հիշատակել է գանձի գրչության թվականը (1399 թ.).

...Ի վեշտասան յոբելենի

Եւ չորրորդ երկտասանի (1399)

Բանըս գըրեցաւ այս գովելի,

Գանձս Յակոբայ՝ Ի Յոհանիսի⁴:

Որևէ կասկած լինել չի կարող, որ Գրիգոր խլաթեցու գանձերից առաջ գրված կաֆաների հեղինակը հենց ինքն է, քանի որ Գրիգոր անունը ոչ միայն տեքստում

³ Տե՛ս **Մաթևոսյան Ա., Մարաբայան Ա.**, Գրիգոր Ծերենց խլաթեցի, Երևան, 2000, էջ 47:

⁴ ՄՄ 4011, 358բ:

է հիշատակվում, այլև կազմվում է տողերի սկզբնատառերով (այդ շրջանում ընդունված բանաստեղծական ոճ էր ծայրակապերով գրելը՝ հողվում էր հիմնականում հեղինակի անունը), օրինակ՝ «Գոչումն ըղձական, գովասանական...» սկզբնատառերով գանձից առաջ գրված կաֆան՝ «Գրիգորա ե» ծայրակապով⁵:

Հաշվի առնելով, որ Գանձարաններում եղած կաֆաների հնագույն նմուշները Գրիգոր Ծերենց հայթեցու գրչին են պատկանում, կարող ենք համարել, որ նա է գանձերին նվիրված կաֆաներ գրելու ավանդույթի հիմնադիրը:

Այսպիսով, ԺԴ դարավերջից սկսած Գանձարան կոչվող ժողովածուներում Գրիգոր հայթեցու հեղինակությամբ հայտնվեցին կաֆա կոչվող բանաստեղծություններ, որոնք մենք անվանեցինք **գանձարանային կաֆաներ**: Այս կաֆաները իրենց ընդհանուր հատկանիշներով՝ կիրառության ոլորտի առանձնահատկությամբ, կառուցվածքով, տաղաչափությամբ, հանգավորմամբ համապատասխանելով արձակ երկերում տեղ գտած կամ դասական կաֆաներին, ունեն նաև միայն իրենց հատուկ հատկանիշները՝ ծայրակապի առկայությունը, հիշատակարանային բնույթը և այլն⁶:

բ. Առաքել Բաղիշեցու կաֆաները Գանձարան ժողովածուներում

Առաքել Բաղիշեցու (շուրջ 1380-1454 թթ.) գրած կաֆաների հնագույն օրինակը հանդիպում ենք հայթեցու ինքնագիր ձեռագրում՝ ՄՄ 6851, դրված «Կիլիկիայի հայրապետին գանձ» խորագրով գանձից հետո: Հեղինակի հաջորդ կաֆան գտնում ենք ՄՄ 5328 (1408-1420 թթ.) ձեռագրում «Գանձ սրբոյն Մինասայ, Երմոզինեայ եւ Գրաբոսի» խորագրով գանձից առաջ: Այս կաֆայի խորագիրը («Գանձս եւ ոգաւոն ասէ զկաֆայս. առաջքն յԱռաքելէ կու կապէ եւ յեռքն՝ է զՄինասէ») գրել է Գրիգոր հայթեցին, քանի որ այն հայթեցու ինքնագիր Գանձարանն է, և հենց խորագրում էլ ցույց է տրված կաֆայի առանձնահատկությունը: Վերջինս կաֆայի հետաքրքիր օրինակ է, քանի որ և՛ տողերի սկզբնատառերով և վերջնատառերով կազմվել է անուններ՝ հեղինակի և սրբի: Կաֆան բաղկացած է 16 տողից, այսինքն երկու ութնյակից, որը շեղում է Գրիգոր հայթեցու կաֆաներից միայն այս հատկանիշով, բովանդակային և մյուս հատկանիշներով համապատասխանում է Գրիգոր հայթեցու կաֆաներին, իսկ այս հետծայրակապային երևույթը Գրիգոր հայթեցու և այլ հեղինակների կաֆաներում չենք նկատել:

Տասնվեց տող ունեցող մեկ այլ կաֆա հանդիպում ենք Ձմմառի վանքի մատենադարանի Հ^մ 81 Գանձարանում, նաև Վենետիկի թիվ 167 ձեռագրում:

Առաքել Բաղիշեցու կաֆաներն ավելի ընդարձակ են, տողերով չեն համապատասխանում, սակայն չափով՝ վանկերով, ու բովանդակությամբ, բնականաբար, նման են Ծերենցյան և դասական կաֆաներին: Ի տարբերություն Գրիգոր հայթեցու կաֆաների, Առաքել Բաղիշեցու հեղինակային կաֆաներում

⁵ Նույն տեղում, 127ա:

⁶ Չնայած այս հատկանիշներն առանձին-առանձին բնորոշ են միջնադարյան գրականության այլևայլ ժանրերի ևս, սակայն դրանք գանձարանային կաֆաները (հատկապես Գրիգոր հայթեցու) տարբերակում են դասական կաֆաներից:

գանձը անձնավորված չէ, և կաֆաները դրված են հիմնականում գանձից հետո, այդպես է և՛ Խլաթեցու ինքնագիր ձեռագրերում, և՛ ՄՄ 6527 ձեռագրում:

գ. Սիմեոն Գանձասաց, Կարապետ Բաղիշեցի և այլք

Գանձարանային կաֆաների մեկ այլ հեղինակ է Սիմեոն գանձասացը, ով ապրել և ստեղծագործել է ԺԴ-ԺԵ դարերում՝ որպես տաղերգու-գանձասաց նաև գրիչ: ՄՄ 5328 ձեռագրում «**Գանձ ամենայն սրբոց հընոց և նորոց**» խորագրով, «**Սիմեոն**» ծայրակապով գանձից առաջ կա Սիմեոն գանձասացի կաֆան, որը կրկին համապատասխանում է դասական կաֆայի ժանրային հիմնական հատկանիշներին, միայն տողերով անհամապատասխան է, ինչպես Առաքել Բաղիշեցու կաֆաները՝ երկու կաֆայի համարժեք:

Գանձարանային կաֆաների հեղինակ է նաև **Կարապետ Բաղիշեցին** (ԺԵ-ԺԶ դդ., տաղասաց): Կարապետ Բաղիշեցու կաֆաները ութտողանի են, համապատասխանում են դասական կաֆաներին և ունեն ծայրակապեր հեղինակի անունով:

Հետխլաթեցիական և ուշ շրջանի խմբագրության Գանձարաններում՝ հատկապես լուսանցքներում, հաճախ ենք հանդիպում գանձերին կից գրված կաֆայանման գրություններ կամ կաֆաներ, որոնց մի մասը ցուցում-կաֆաներ կարելի է անվանել: Վերջիններիս հեղինակները տվյալ գանձի հեղինակները չեն, այլ գրված են հետագայում, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում գանձերի հեղինակների մասին: Ահա այս գանձերից առաջ գրված կաֆաները հաստատում են այն ենթադրությունները, որ գանձերի հեղինակ Խաչատուր վարդապետը կամ Խաչատուր գանձասացը նույն **Խաչատուր Կեչառեցին** է, **Մկրտիչը**՝ նրա հոգևոր որդին: Իսկ թե ո՛վ է Խաչատուր Կեչառեցու և Մկրտիչի, ինչպես նաև Մխիթար Այրիվանեցու գանձերից առաջ գրված կաֆաների **հեղինակը** (կամ **հեղինակները**), դեռևս անհայտ է:

Այսպիսով, հանելուկները Հայսմավուրք ժողովածու ներմուծող հեղինակը զուգադրել է երկու ժանրեր, որի նպատակն է ցույց տալ **միևնույն կերպարի (երկուսի գլխավոր հերոսն էլ նույն սուրբն է) գրական-գեղարվեստական ընկալումը՝ տարբեր ժանրերի միջոցով**, որոնք ոչ միայն չեն ձուլվում, այլև փոխներթափանցման փորձ անգամ չեն կատարում: Մինչդեռ **կաֆաները**, որոնք ԺԴ դարավերջին Գրիգոր Խլաթեցին ներմուծեց Գանձարան ժողովածուներ (առաջին նմուշները գտնում ենք ՄՄ 4011 ձեռագրում), և որոնք մենք անվանեցինք **գանձարանային կաֆաներ**, նվիրված են գանձերին և գրված են այդ գանձերին կից, ձուլվել են գանձին՝ կազմելով գանձի և Գանձարանի մի մասը, իհարկե պահպանելով ժանրային գլխավոր առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՁԵՌԱԳՐԻ ՀԻՇՏԱՏԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՆՐ
(ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ)

2. 1. Ձեռագրի հիշատակարանի ընդհանուր բնութագիրը

Հայերեն ձեռագրի առաջացմանը զուգընթաց երևան է եկել հայ միջնադարյան գրականության կարևոր ժանրերից մեկը՝ ձեռագրի հիշատակարանը:

Մեզ հասած հայերեն ձեռագիր մատյանների մեծ մասն ունի հիշատակարաններ՝ գրված ձեռագրի վերջում և առանձին հատվածների ավարտից հետո, որոնք հասնում են մի քանի տողից մինչև մի քանի էջ՝ կախված գրչի կարողություններից և նախասիրություններից, տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություններից:

ԺԲ-ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները տպված են առանձին հատորներով, որոնք ունեն շատ կարևոր առաջաբան-ուսումնասիրություններ, իսկ, ընդհանրապես, հայերեն ձեռագրերի հիշատակարանների մասին կան մեծագրություններ, բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ, որոնցում հիշատակարանն ուսումնասիրված է որպես գրական երևույթ, գրական տեսակ, սակայն ո՛չ որպես գրական ժանր՝ այն ժանրային հատկանիշների հստակ սահմանմամբ, որոնցով հիշատակարանը իր ուրույն տեղը կգտներ միջնադարյան գրականության ժանրերի շարքում:

Գրեթե ամեն օր առնչվելով հիշատակարանի հետ՝ նկատեցինք, որ այն նույնպես ունի բոլոր այս հատկանիշները, որոնցով դառնում է գրականության առանձին ժանր, գուցե «կախյալ-ձեռագրական», բայց առանձին՝ իր հստակ ժանրային առանձնահատկություններով:

Աշխատանքի այս գլխում մեր խնդիրը **հիշատակարանի ժանրային առանձնահատկությունների վերհանումն է** (հիմնականում ժԲ-ԺԵ դարերի ձեռագրերի հիշատակարանների օրինակով, երբեմն նաև հետագայի, իսկ ավելի վաղ գրված ձեռագրերի հիշատակարաններին չենք անդրադառնա, քանի որ քիչ թվով են մեզ հասել և հնարավոր է իրական պատկերը չներկայացնեն), որոնցով այն իր ուրույն տեղը և դերը կունենա միջնադարյան գրականության ժանրերի շարքում:

2. 2. Հիշատակարանի ժանրային առանձնահատկությունները

ա. Հիշատակարանների գլխավոր ժանրային հատկանիշը **թեմատիկ** առանձնահատկությունն է, թե ո՛ւմ է ուղղված հիշատակարանը և ինչի՞ մասին է: Իսկ այդ առանձնահատկությունը վեր հանելու համար, նախ և առաջ պետք է քննել դասական հիշատակարանի կառուցվածքը, որը նույնպես հիշատակարանի ժանրային առանձնահատկություններից մեկն է՝ **կառուցվածքային առանձնահատկությունը**: Հիշատակարանը, որպես հայ միջնադարյան գրականության հնագույն ժանր ունի կայուն կառուցվածք. այն բաղկացած է երկու մասից՝ փառքի և հիշատակի հատվածներից:

Հիշատակարանի ժանրի ոճային առանձնահատկություններից մեկն էլ գրչի լեզուն: Գրիչը հիշատակարանում մշտապես իրեն բնութագրում է

նվաստացուցիչ բառերով՝ մեղավոր, փծուն, ապիկար, ծույլ, անարժան և այլն, ինչը հատուկ է միջնադարյան մտածելակերպի մարդուն:

Հիշատակարանները հաճախ դրսևորվել են որպես խորհուրդ-խրատներ, որոնք ուղեկցվել են **անեծքներով** կամ **օրհնանքներով**: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հաճախադեպ է, երբ գրիչը անեծքով կարծես սպառնում է ձեռագիրը գողացողին, տվյալ վայրից տեղափոխողին, վնասողին, կամ անունը եղծողին: Ինչպես նաև գրիչը օրհնում է իրեն և իր մերձավորներին հիշողներին:

բ. Երկրորդ կարևոր հատկանիշը հիշատակարանի կիրառության ոլորտի կամ բնագավառի առանձնահատկությունն է՝ որպես գրականության ժանր:

Հիշատակարանը «**ոչ ինքնուրույն-կիսանկախ**» ժանր է, որը կազմելով ձեռագրերի անբաժանելի մասը՝ երբեք ձեռագրից առանձին չի ստեղծվում, անջատ հանդես չի գալիս (միայն որպես բանաստեղծություն կարող է հանդես գալ առանձին), սակայն գրվելով բնագրի կամ առանձին հատվածների ավարտից հետո՝ չի ծուլվում դրանց հետ, պահպանում է իր «**ժանրային անվանումը**», առանձնահատկությունները, ի տարբերություն գրառաջքի ժանրի, որը իր խմբից կամ փնջից դուրս չի պահպանում անվավումը՝ ծուլվելով թղթի հետ կազմում է նրա մի մասը և անվանվում թուղթ:

գ. Ինչպես միջնադարյան գրականության բազմաթիվ ժանրեր, այնպես էլ հիշատակարանները ըստ իրենց ձևի կարող են լինել արձակ կամ չափածո: Արձակ հիշատակարանները, կարելի է ասել, փոքր ծավալի պատմություններ են, որտեղ կարող ենք գտնել ոչ միայն ժամանակի կարևոր պատմաքաղաքական անցքերի մասին արժեքավոր տեղեկություններ, ինչպես վերը նշեցինք, այլև գեղարվեստական արձակի զանազան նմուշներ: Մեծ թիվ են կազմում նաև **չափածո** հիշատակարանները. խոսքը ավելի դիպուկ, ազդեցիկ և գեղարվեստական դարձնելու համար չափածոյով ստեղծագործելու տաղանդ ունեցող գրիչները գրել են բանաստեղծական ոճով (երբեմն միայն փառատրական հատվածը):

դ. Հիշատակարանի ժանրային առանձնահատկություն-դրսևորումներից մեկն էլ ծածկագրությամբ կամ գաղտնագրությամբ գրելն է:

Ծածկագրությունը որպես երևույթ երևան է եկել վաղնջական ժամանակներից, երբ այս կամ այն գրության հեղինակը ցանկացել է գաղտնի պահել որևէ տեղեկություն, օրինակ՝ իր անունը, գրչության տեղը, ժամանակը և այլն: Գրիչները շատ հաճախ գաղտնագրել են իրենց **անունը, ձեռագրի գրչության թվականը, ժամանակը**, երբեմն **ամբողջ հիշատակագրությունը՝** ցանկանալով փրկել իրենց անունը և հիշատակը պղծությունից:

ե. Կաղապարային հիշատակարաններ

Հիշատակարանի ժանրի առանձնահատուկ դրսևորումներ են **հիշատակարանային կաղապարները և կաղապարային հիշատակարանները**: Հիշատակարանային կաղապարներն են այն արտահայտությունները, բառակապակցությունները, նույնիսկ նախադասությունները, որոնք հաճախ կրկնվում են ձեռագրերի ամենատարբեր կառուցվածք ունեցող հիշատակարաններում: Հայերեն ձեռագրերի **հիշատակարանային կաղապարներին** առավել մանրամասն

անդրադարձել է Խ. Հարությունյանը, որն այդ կաղապարները դասակարգել է չորս պայմանական խմբի մեջ՝ «ա. կառուցվածքային բնույթի համընդհանուր կաղապարներ, բ. գրչօջախների կնիքը կրող կաղապարներ, գ. հեղինակային կաղապարներ, դ. թափառող կաղապարներ»⁷: Իսկ Բոլոնիայի համալսարանի պրոֆ. Ա. Շիրինյանն առանձնացրել է հիշատակարաններում կրկնվող զանազան արտահայտություններ և բառակապակցություններ⁸. սրանք ուսումնասիրել է նաև բելգիացի հետազոտող Էմմանուել Վան Էվերդինգեն⁹:

Հիշատակարանային կաղապարներից գատ գոյություն ունեն **կաղապարային հիշատակարաններ**, հիշատակարանի նմուշ-օրինակներ, որոնք առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել (խոսքը հիշատակարանի փառքի հատվածների մասին չէ, որոնք հաճախ կրկնվում են):

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները թեև այժմ են ընկնում իրենց բազմազանությամբ և հարստությամբ, այնուամենայնիվ մեծ մասամբ գրվել են կաղապարներով: Գրիչները հաճախ ունեցել են հիշատակարանի իրենց նմուշ-օրինակը՝ ստեղծված այս կամ այն բովանդակության ձեռագրի համար, որոնցում բաց են թողնվել գրչության ժամանակը, տեղը, անունները, որպեսզի հետագայում այս օրինակներից օգտվողները ավելացնեն սեփական տվյալները: Հայերեն ձեռագրի կաղապարային հիշատակարանի հետաքրքիր և տիպիկ օրինակ է 1476 թ. Երուսաղեմում գրված **ՄՄ 2335** ձեռագրում տեղ գտած հիշատակարանը, այն առաջին անգամ հրատարակել է Ա. Մաթևոսյանը¹⁰:

Ձեռագրերում կան ոչ միայն հիշատակարանի, այլև **արձանագրություն-հիշատակարանի** նմուշ-օրինակներ: Օրինակ, ՄՄ 3461 ձեռագրում կան աղբյուրի, գավաթի վրա գրելու արձանագրությունների օրինակներ՝ գրված ձեռագրի գրիչ Հովհաննես Բաբերդցու ձեռքով:¹¹

Այս հիշատակարանին հաջորդում են գավաթի վրա գրելու նմանատիպ հիշատակարանների օրինակներ¹²:

գ. Ձեռագրի հիշատակարաններն ըստ իրենց հեղինակների լինում են տարբեր՝ գրչի, ստացողի, նորոգողի, թարգմանչի, ծաղկողի, կազմողի և այլն, **ընդ որում՝ ձեռագրի գրչության ժամանակի և հետագայի**: Երբեմն հանդիպում է նաև սրբագրիչի հիշատակարան: Ձեռագրի գրչի հիշատակարանը շատ հաճախ կարող է համընկնել հեղինակի հիշատակարանի հետ, այն դեպքում երբ ձեռագրի

⁷Տե՛ս **Հարությունյան Խ.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 198-217:

⁸ **Sirinian A.**, On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, „Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text“, ed. by **V. Calzolari** with the collaboration of **M. E. Stone**, Brill, Leiden-Boston 2014, pp. 76-85:

⁹ **Van Elverdinghe E.**, Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons, “Journal of Data Mining and Digital Humanities”, Special Issue (2017), pp. 1-7.

¹⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխ.՝ **Ա. Ա. Մաթևոսյանի**, Երևան, 1988, էջ ԺԸ:

¹¹ ՄՄ 3461, 43ա:

¹² Նուն տեղում:

կազմող-հեղինակը և գրիչը նույն մարդն է: Հեղինակի հիշատակարանից պետք է տարբերել **նախագաղափար հիշատակարանները**, որը տվյալ ձեռագրի գրիչը այս կամ այն պատճառով ընդօրինակել է նախագաղափար օրինակի ձեռագրից:

Ձեռագրի գրչության ժամանակից հետո, այլ ձեռքով գրված հիշատակարանները կոչվում են **հետագայի հիշատակարաններ**, որոնք կարող են լինել հետագայի գրչի, լրացնողի, սրբագրողի, կազմողի, նորոգողի և այլն:

Հայերեն ձեռագրի հիշատակարանը գրվելով բնագրի կամ առանձին հատվածների ավարտից հետո՝ չի ձուլվում դրանց, պահպանում է իր **«ժանրային անվանումը»**, ուստի այն պամանականորեն կանվանենք **«ոչ ինքնուրույն-կիսանկախ ժանր»**:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԳՐԱՌԱԶՔԻ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՆՐ
(ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ)

3.1. Գրառաջքի ժանրի ընդհանուր բնութագիրը

Հայերեն ձեռագիր մատյաններում հաճախադեպ են «Գրառաջք» (կամ «Գրառաջ»), «Թղթառաջք», «Նախերգան», «Գովասանություն», «Օրհնություն», «Շարադրանք», «Բարեագիր» և այլ անվանումներով գրվածքներ, որոնք փոքր ծավալի գեղարվեստական ստեղծագործություններ են՝ ստեղծված նամակների, թղթերի, կոնդակների, հրովարտականների և այլ գրությունների սկզբում դրվելու համար, որպես նախաբաններ:

Գրառաջքները ունեն հարուստ գեղարվեստական «ոճավորում», ուղղված են հասարակության մեջ տարբեր դիրք և դեր ունեցող մարդկանց՝ կաթողիկոսներին, թագավորներին, զինվորներին, վարդապետներին, քահանաներին. գովերգվում են վերջիններիս ներքին և արտաքին առավելությունները՝ գեղեցկությունը, խելքը, հմտությունները և այլն:

Ձեռագրերում գրառաջքները մեծ մասամբ հանդիպում են խմբերով՝ մեկ ընդհանուր խորագրի ներքո:

Ինչպես նկատել է պրոֆեսոր Ա. Դուլխանյանը, մեզ են հասել ԺԳ դարի բանաստեղծ **Հովհաննես Երզնկացու** գրառաջքները, որոնք այժմ համարվում են այս գրական տեսակի հնագույն նմուշները, սակայն չի բացառվում դրանց ավելի վաղ գոյությունը¹³: ՄՄ Հ⁴⁰ 652 ձեռագրում **«Ազգմունք նորին Յոհանու Ըզրնկեցոյ ասացեալ է»** ընդհանուր խորագրի տակ կա երեք գրառաջք¹⁴: Ա. Դուլխանյանը գրում է, թե կան հիմքեր մտածելու, որ այս օրինակները փշրանքներ են Հովհաննես Երզնկացու ստեղծած գրառաջքներից:

¹³Տե՛ս **Դուլխանյան Ա.**, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012, էջ 92:

¹⁴ ՄՄ 652, 75բ-7բ:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ԺԳ-ԺԵ դարերում գրված, գրառաջքներ ունեցող 12 ձեռագիր (ԺԲ և ավելի վաղ դարերից չկան), Մեծի տանն Կրիկիոյ կաթողիկոսության ձեռագրական հավաքածուում ԺԴ դարի 1 ձեռագիր, իսկ հետագա դարերում (ԺԶ-ԺԵ դարերի ձեռագրերում) այս թիվը զգալիորեն մեծանում է:

Այս աշխատանքում մեր խնդիրը գրառաջքի՝ որպես հայ միջնադարյան գրականության ժանրի ներկայացումն է՝ վերջինիս գրական-ժանրային հատկանիշների վերհանման ու քննության, միջժանրային՝ հատկապես հիշատակարանների հետ ունեցած առնչությունների բացահայտման միջոցով (ինչպես **ԺԲ-ԺԵ**, այնպես էլ հետագա դարերի ձեռագրերում եղած գրառաջքների օրինակներով):

3. 2. Գրառաջքի ժանրային առանձնահատկությունները

ա. Գրառաջքների ժանրային գլխավոր հատկանիշը թեմատիկ առանձնահատկությունն է. ինչպես նշեցինք, ժանրի ընդհանուր բնութագրի մեջ, գրառաջքները ուղղված են հասարակության մեջ տարբեր դիրք և դեր ունեցող մարդկանց, ինչպես հոգևոր՝ կաթողիկոսին, վարդապետին, եպիսկոպոսին, քահանային, այնպես էլ աշխարհիկ անձանց՝ տանուտեր ռայիսին, իշխանին, վաճառականին, թագավորին, կանանց, զինվորին և այլոց: Հարկ է նշել, որ գրառաջքների մեծ մասը նվիրված են հոգևորականներին և գրված են այնպիսի մակդիրներով ու համեմատություններով, դրվատանքի և մեծարանքի այնպիսի խոսքերով, որ պատշաճի տվյալ անձին, ում որ ուղղված է այն:

Գրառաջքի հեղինակները հասցեատերերի անունների փոխարեն գործածել են պայմանական արտահայտություններ՝ «**այս անուն**», «**անուն որ է**», «**ով որ է**», «**ով որ լինի**» և այլն, կամ ուղղակի անվան տեղը բաց են թողել: Այս հատկանիշը, իհարկե, բնորոշ է գրառաջքի ժանրին, քանի որ սրանք նմուշ-օրինակներ են, սակայն ժանրի սահմանման մեջ առաջնային չէ. միայն այս հատկանիշի առկայությունը չի ենթադրում տվյալ ստեղծագործության գրառաջք լինելը և բացակայությունը՝ հակառակը:

բ. Երկրորդ կարևոր հատկանիշը կիրառության ոլորտի առանձնահատկությունն է: Գրառաջքները ստեղծված լինելով այս կամ այն գրվածքին նախորդելու նպատակով՝ ունեն ոչ ինքնուրույն կիրառություն և ձուլվելով թղթի հետ՝ ստանում են թուղթ անվանումը՝ կորցնելով անգամ «**ժանրային անվանումը**», այսինքն՝ գրառաջքը իր խմբից դուրս ինքնուրույն կիրառություն չունի (ուստի այն պայմանականորեն կանվանենք «**ոչ ինքնուրույն-կախյալ**» ժանր) բացառությամբ չափածո գրառաջքների, որոնք ունեն նաև ինքնուրույն կիրառություն՝ ընկալվելով որպես տաղ կամ բանաստեղծություն:

գ. Գրառաջքները լինում են արձակ և չափածո: Արձակ գրառաջքը փոքր ծավալի շարադրանք է՝ ուղղված այս կամ այն անձին, այն չունի ինքնուրույն կիրառություն՝ ի տարբերություն չափածոյի: ԺԴ-ԺԵ դարերի ձեռագրերում մեծամասնություն են կազմում արձակ գրառաջքները՝ ուղղված տարբեր մարդկանց:

Չափածո գրառաջքների մեծ մասը գրվել և զարգացման իր բարձրակետին է հասել ԺԵ դարում, և ընդհանրապես, գրառաջքների մեծ մասն էլ չափածոյով է

պահպանված. նամակի սկիզբը ավելի դիպուկ, հուզական և հագեցած դարձնելու համար գրել են չափածոյով, քանի որ չափածոյում հուզականությունն ու զգացմունքայնությունն ավելի մեծ է: Չափածո գրառաջքների տողաքանակը կայուն չէ, կարող է լինել 4 տողից մինչև 10-12 չորստողանոց տուն, ունեն հիմնականում ութվանկանի տողեր: Գրառաջք-բանաստեղծությունները հանգավորված են՝ ձգտել են նույնահանգության, երբեմն ունեն ծայրակապեր:

Այսպիսով, գրառաջքի գրական տեսակը կազմելով միջնադարյան գեղարվեստական արձակի և չափածոյի մի բաժինը՝ առանձնանում է մյուս գրական ժանրերից և դառնում հայ միջնադարյան գրականության ժանրերից մեկը, որը պայմանականորեն անվանեցինք «**ոչ ինքնուրույն-կախյալ**» ժանր:

3. 3. Գրառաջք-հիշատակարան ժանրային առնչությունները

Հիշատակարանը մեծ մասամբ գրվելով ձեռագրի ավարտից հետո՝ վերջին էջերում, կարծես գրչի կողմից ընթերցողին (եկող սերնդին) ուղղված նամակ լինի, որում գրիչը հորդորում է՝ աղոթքներում հիշել իրեն, ստացողին, իրենց մերձավորներին և «մէկ բերան» ողորմի տալ, միաժամանակ բավականաչափ տեղեկություններ է հաղորդում ձեռագրի՝ գրման, կազմման և այլ հանգամանքների մասին: Այսինքն՝ և՛ գրառաջքները, և՛ հիշատակարանները վերջին հաշվով նամակներ են, թղթեր՝ միայն թե հիշատակարանի հասցեատերը մեկն է՝ ընթերցողը, իսկ թղթի կամ գրառաջքի հասցեատերերը տարբեր՝ կաթողիկոսը, թագավորը, եպիսկոպոսը, քահանան, գրագիրը և այլք: Այդուհանդերձ, բուն հիշատակարանի (փառատրական մասից հետո եկող հատվածը) և գրառաջքի միջև փնտրել խորքային-բովանդակային լուրջ նմանություններ՝ անիմաստ է, կարող ենք փնտրել ձևային, գեղարվեստական, ոճական և մասամբ բովանդակային աղբյուրներ՝ ի տարբերություն հիշատակարանների փառատրական հատվածների, որոնց որոշ վերապահումներով կարելի է գրառաջքներ անվանել, որտեղ գրիչները աստվածաբանական, դավանաբանական դատողություններով և գովերգող մակդիրներով փառաբանում են Աստծուն: Պատահական չէ, որ տարբեր հիշատակարանների փառատրական մասերը հաճախ կրկնվում են, և երևի այդ իսկ պատճառով փառատրության մասը որոշ գրիչներ դիտել են որպես մի առանձին ու անկախ հատված և առանձնացրել բուն հիշատակարանից:

Այսպիսով, գրառաջքի և հիշատակարանի գլխավոր ընդհանրությունը **համանման ժանրային բնույթն** է, ինչն ակնհայտ է՝ երկուսն էլ ոչ ինքնուրույն գրական ժանրեր են՝ **կախյալ (գրառաջք)** և **կիսանկախ (հիշատակարան)**, բացառությամբ այն չափածո ստեղծագործությունների, որոնք որպես տաղ կամ բանաստեղծություն կարող են անկախ հանդես գալ: Ինչպես վերը նշեցինք, գրառաջքները ստեղծված են տարբեր գրությունների սկզբում դրվելու համար և վերջնական արդյունքում վերջիններիս մաս կազմելու, ուստի այն պայմանականորեն կարող ենք անվանել «**ոչ ինքնուրույն-կախյալ**» ժանր: Իսկ հիշատակարանները՝ կազմելով ձեռագրերի անբաժանելի մասը, գրվելով բնագրի կամ առանձին հատվածների ավարտից հետո, չեն ձուլվում դրանց, միշտ պահպանում են իրենց «ժանրային անվանումը», սակայն երբեք ձեռագրից

առանձին, անջատ հանդես չեն գալիս, ուստի հիշատակարանն էլ պայմանականորեն կարող ենք անվանել «**ոչ ինքնուրույն-կիսանկախ**» ժանր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՅԼ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ ԺԲ-ԺԵ ԴԱՐԵՐԻ
ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ
(ընդհանուր բնութագիր)

ԺԲ-ԺԵ դարերում ընդօրինակված ձեռագրերի մեծ մասը Ավետարաններ, Ճառընտիրներ, Ճաշոցներ, Մաշտոցներ, Շարակնոցներ են, սակայն կան նաև Ժողովածու կոչվող ձեռագրեր, որոնք պարունակում են **պատմագրության, վարք-վկայաբանության** ժանրին պատկանող երկեր, **թղթեր, շարականներ, ներբողներ, տաղեր և գանձեր, առակներ, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»** երկը¹⁵։ Ինչպես նշել ենք, այս ժանրերը համակողմանի ուսումնասիրված են, ուստի մեր նպատակը և խնդիրը վերոնշյալ ժանրերի՝ ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում ընդգրկվածության պատկերը ներկայացնելն է՝ ժանրերի ընդհանուր բնութագրով:

Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը ամենամեծն է, բավական է՝ ընդհանուր պատկերացում կազմելու ԺԲ-ԺԵ դարերի ձեռագրերում ընդգրկված գրական ժանրերի մասին, ներկայացնելու ժանրային ընդհանուր պատկերը:

4. 1. Պատմագրության, վարք-վկայաբանության, թղթի ժանրերի ընդհանուր բնութագիրը, ընդգրկվածությունը ԺԲ-ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում

Հայ պատմագրությունը հնագույն ժանր է, որը ձևավորվել է դեռևս Ե դարից սկսած՝ դառնալով հայ հին և վաղ միջնադարյան գրականությունը սկզբնավորող ժանրերից մեկը: Այն լինելով համադրական ժանր և կազմելով գեղարվեստական **գրականության անբաժանելի մասը՝ իր մեջ է ամփոփում պատմականն ու գեղարվեստականը**, որն էլ համարվում է ժանրի գլխավոր հատկանիշը: Պատմագրության կարևոր հատկանիշներից մեկը **պատմական իրադարձությունները ճիշտ ժամանակագրական և փաստական հաջորդականությամբ, ինպես նաև գեղագիտական որոշակի սկզբունքներով ներկայացնելն է**: Միջնադարյան արձակի գրեթե բոլոր տեսակները եղել են հայ պատմագրության մեջ, այն հայ միջնադարյան գրականության հավաքական ժանր է:

Վարք-վկայաբանությունները (սրբախոսություններ, ագիոգրաֆիա) առանձին-ինքնուրույն ժանրեր են, հետագայում պատմագրությունից առանձնացած պատմագրական հուշարձաններ, որոնք այս կամ այն նշանավոր անձի, քրիստոնեական գործչի, եկեղեցու հայրերի և սրբերի կենսագրություններ և կյանքի հետաքրքիր պատմություններ են, և հատկապես այն պատմություններն են, որոնք նրանց դարձրել են վարքի կամ վկայաբանության հերոս¹⁶: Մաշտոցի

¹⁵ Հանելուկներին անդրադարձանք աշխատանքի առաջին գլխում:

¹⁶ Տե՛ս **Ավդաբեգյան Մ.**, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար), Երևան, 1971, էջ 57:

անվան Մատենադարանում պահվում է ԺԲ-ԺԵ դարերում գրված շուրջ 43 ձեռագիր, որոնք պարունակում են պատմագրության ժանրին պատկանող երկեր, վարք-վկայաբանություններ: **Թուղթը (նամակ)** հայ միջնադարյան գրականության ամենատարածված ժանրերից է, որը ձևավորվել է Ե դարում՝ ուղղված է որևէ անձի կամ մարդկանց խմբի, բաղկացած է երեք մասից՝ թղթառաջքից (որում գրվում են նամակագրի, հասցեատիրոջ անունները, պաշտոնը, ողջույնի խոսքը), բուն նամակային մասից, վերջաբանից կամ թղթավերջքից: Թղթերը նույնպես եղել են **արծակ** և **չափածո**: Մաշտոցի անվան Մատենադարանում են պահվում ԺԲ-ԺԵ դարերում գրված 54 ձեռագիր մատյան, որոնք պարունակում են թղթեր (մեծ մասը ժողովածու կոչվող ձեռագրեր են):

4. 2. Շարականների, ներբողների, գանձերի և տաղերի, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի ընդգրկածությունը ձեռագրերում

Շարականները, ներբողները, գանձերը և տաղերը չափածո գրական ժանրեր են (ներբողները՝ նաև արծակ), որոնք մեզ են հասել ոչ միայն ԺԲ-ԺԵ, այլև հետագա դարերում գրված և ընդօրինակված ձեռագիր մատյաններով:

Շարականները հոգևոր երգեր են, որոնք գրվել են Ե դարից սկսած մինչև ԺԵ դարը՝ մտնելով ծիսական գրականության մեջ և կազմելով հայ միջնադարյան գրականության հիմնական ժանրերից մեկը: Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ պահվում են ԺԲ-ԺԵ դարերում ընդօրինակված 112 ձեռագիր Շարակնոց:

Ներբողի ծագումը և զարգացումը, կապված է անտիկ գրականության հետ՝ ակունքները գալիս են դեռևս Հին Հունաստանից: Ներբող, որ հայերեն նշանակում է գովեստ, գովք, գովասանք, միջնադարում կրել է ներբողյան անունը. ներբողի առարկա կարող են լինել՝ անձը, վայրը, կենդանին:

ԺԲ, ԺԴ դարերի ձեռագրերում կան ներբողի ժանրին պատկանող գրվածքներ:

Գանձեր և տաղեր

Մասնագետների կարծիքով գանձերը հայ գրականության մեջ են մտել սկսած Ժ դարից և կապվում են Գրիգոր Նարեկացու անվան հետ: Գանձ կոչվող բանաստեղծությունները ամփոփված են Գանձարան ժողովածուի մեջ, որը կազմել է Հայոց եկեղեցու ծիսական գրականության մի մասը¹⁷:

Տաղը Գանձարանում՝ գանձից հետո եկող հաջորդ միավորն է, միջնադարյան բանաստեղծության տեսակ, որը երգվել է պատարագի ժամանակ, տաղերը ամփոփված են Տաղարան ժողովածուներում: Հետագայում տաղ են կոչվել նաև աշխարհիկ բանաստեղծությունները, որոնք եկեղեցում չեն երգվել: Տաղ տերմինը, ինչպես գանձը՝ որպես գրական-գեղարվեստական երևույթ նույնպես կապվում է Գրիգոր Նարեկացու անվան հետ:

¹⁷ «Գանձերի ժանրի և գանձարանային կանոնի ձեռավորումը» տե՛ս **Դևրիկյան Վ.**, Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան ժողովածուն», Ատենախոսություն, Ժ.01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար, Երևան, 2013, էջ 17-78:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ԺԲ-ԺԵ դարերում գրված տաղեր և գանձեր պարունակող շուրջ 126 ձեռագիր:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը

Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգության» երկը գրական-գեղարվեստական ստեղծագործության մեծագույն արժեք է: «Մատյանը», ինչպես գրում է գրականագետ Հրաչյա Թամրազյանը, Նարեկացու կենսագրության լավագույն վկայականն է: Ներսես Լամբրոնացին առաջինն էր, որ տվեց «Մատյանի» ժանրային բնութագիրը այն անվանելով է **գիրք աղոթից**, կամ **աղոթագիրք, աղոթամատյան**, ինչպես և անվանել է ինքը՝ Գրիգոր Նարեկացին: «Մատյանը» աղոթագիրք են համարել նաև Ղ. Ալիշանը, Նալյանը, Մ. Չամչյանը, Գ. Ավետիքյանը, Գ. Զարբախանյանը, Ե. Դուրյանը, Թ. Գուշակյանը, Ս. Քելիշյանը և ուրիշներ:

Աբեղյանը գրում է, որ «Մատյանը» ազատ անդամներով մի հորինվածք է, և բավական մոտենում է արձակ խոսքին:

«Մատյան ողբերգության» երկը հետագայում բազմաթիվ գրականագետների կողմից ընկալվել է որպես պոեմ:

Արշալույս Ղազինյանը, անդրադառնալով «Մատյանի» ժանրի հարցին, հանգում է այն եզրակացության, որ այն քնարական սեռի ստեղծագործություն է և առանձին, եզակի ժանր: Համաձայնելով Ա. Ղազինյանի եզրահանգման հետ՝ մենք նույնպես ընդունում ենք «Մատյան ողբերգության» երկը որպես առանձին գրական ժանր՝ հաշվի առնելով վերջինիս յուրահատուկ բնույթը՝ **չունի սյուժե, ունի տաղաչափական կառուցվածք, ներքին հանգավորում**:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ԺԲ-ԺԵ դարերում գրված 57 ձեռագիր մատյան, որոնք պարունակում են Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը:

4. 3. Առակի ժանրի ընդգրկվածությունը ձեռագրերում

Առակը հայ միջնադարյան գրականության փոքրածավալ ժանրերից է, որի ակունքները գալիս են ժողովրդական բանահյուսությունից:

Ինչպես նշեցինք, ԺԲ-ԺԳ դարերում հասարակության սոցիալ-մշակութային կյանքում տեղի ունեցած փոփոխությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծել գեղարվեստական գրականության զարգացման, հատկապես նոր գրական ժանրերի առաջացման և ձևավորման համար: Ահա, այս շրջանի մեծագույն նվաճումներից մեկը առակագրության՝ որպես առանձին գրական ժանրի ձևավորումն է հայ միջնադարյան գրականության մեջ, որի հիմնադիրը, ինչպես հայտնի է, եղավ Մխիթար Գոշը, ում առակները մարդու կյանքը պատկերում են տարբեր կողմերից, վեր են հանում առօրյա հոգսերը և խնդիրները, արծարծում ազգային ինքնագիտակցության գաղափարին վերաբերող հարցեր:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է ԺԲ-ԺԵ դարերում գրված առակներ պարունակող 11 ձեռագիր ժողովածու:

Որպես ամփոփում նշենք, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուում պահվող ԺԲ-ԺԵ դարերի 400-ից ավելի ձեռագրեր պարունակում են հայ միջնադարյան գրականության ժանրեր, որոնք ունեն գեղարվեստական

արժեք. մեծապես ընդօրինակվել են Շարակնոց ժողովածուները՝ 112 ձեռագիր, ապա՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը՝ 57 ձեռագիր, տաղեր և գանձեր (126 ձեռագրում), թղթեր (54 ձեռագրում), պատմագրության ժանրին պատկանող երկեր պարունակող ժողովածուներ (54 ձեռագիր), ինչպես նաև առակներ (11 ձեռագիր), ներբողներ (3 ձեռագիր) պարունակող ժողովածուներ: Վերոնշյալ ժանրերը ձեռագրերում կանոնավոր դրսևորումներ ունեն և պահպանել են ժանրային հիմնական առանձնահատկությունները: Իսկ որոշ ժանրեր՝ **հանելուկներն ու կաֆաները**, որոնց առանձին անդարդարձանք, մեզ են հասել ոչ միայն առանձին ժողովածուների, այլև Հայսմավուրք և Գանձարան ժողովածուների միջոցով՝ պահպանելով ժանրային հիմնական առանձնահատկությունները, միաժամանակ ձեռք բերելով յուրահատուկ դրսևորումներ, ուղղակի կամ անուղղակի կապվելով **Հայսմավուրքում տեղ գտած վարքերի և Գանձարանի գանձերի** հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննելով ԺԲ-ԺԵ դարերի հայերեն ձեռագրերում տեղ գտած ժանրերը և առանձնացնելով որոշների յուրահատուկ դրսևորումներն ու առանձնահատկությունները՝ եկանք հետևյալ եզրակացությունների.

1. Հայ միջնադարյան գրականության ժանրերից հանելուկը և կաֆան ունեն յուրահատուկ դրսևորումներ: Դրանք հանդես գալով Հայսմավուրք և Գանձարան ժողովածուներում՝ վարքերին և գանձերին կից, ընդլայնում են ժանրի կիրառական սահմանները և դրսևորում ձևային նոր առանձնահատկություններ:

2. Հայսմավուրքների մեջ կիրառված հանելուկները երբևիցե վարքի կամ Հայսմավուրք ժողովածուի մաս չեն կազմել. ներմուծող հեղինակը (հավանաբար՝ Գրիգոր Ծերենց խլաթեցին), զուգադրելով վարքի և հանելուկի ժանրերը, նպատակ է ունեցել ընթերցողի համար դյուրին դարձնել վարքի ընկալումը, ինչպես նաև ցույց տալ միևնույն կերպարի (սրբի) գրական-գեղարվեստական ընկալումը:

3. Կաֆան Գանձարան ժողովածու ներմուծվեց Գրիգոր խլաթեցու ձեռքով ԺԴ դարավերջին (առաջին նմուշները գտնում ենք ՄՄ 4011 ձեռագրում), որոնք գիտական շրջանառության մեջ ենք դնում գանձարանային կաֆաներ բնորոշումով: Գանձարանային կաֆաները հանդես են գալիս գանձերին կից, որոնց ձուլվելով, կազմում են գանձի և Գանձարանի մի մասը՝ պահպանելով ժանրային առանձնահատկությունները: Այս կաֆաներն իրենց ժանրային հատկանիշերով՝ կիրառության ոլորտով, կառուցվածքով, տաղաչափությամբ, հանգավորմամբ, համապատասխանում են դասական կաֆաներին, սակայն ունեն նաև միայն իրենց բնորոշ հատկանիշները՝ ծայրակապի առկայությունը, հիշատակարանային բնույթը:

4. Գանձարանային կաֆաների խլաթեցիական ավանդույթը շարունակվում է մինչև ԺԸ դարը. Գանձարան ժողովածուներում իրենց գանձերին նվիրված կաֆաներ են հյուսում Առաքել Բաղիշեցին, Սիմեոն գանձասացը, Կարապետ Բաղիշեցին և այլ տաղասաց, գանձասաց գրիչներ ու հեղինակներ: Այս կաֆաները նույնպես ունեն աղբյուրագիտական կարևոր նշանակություն՝ ունենալով ոչ պակաս գեղարվեստական արժեք:

5. Հայերեն ձեռագրի ստեղծմանը զուգընթաց երևան է եկել հիշատակարանը, և, կազմելով ձեռագրերի անբաժանելի մասը, երբեք ձեռագրից առանձին չի կիրառվել, անշատ չի դրսևորվել (բացառությամբ չափածո և տաղի մակարդակի հասած հիշատակարանների, որոնք կարող են դրսևորվել ինքնուրույն): Հիշատակարանը գրվելով բնագրի կամ առանձին հատվածների ավարտից հետո՝ չի ձուլվում դրանց, պահպանում է իր «**ժանրային անվանումը**», ուստի այն պամանականորեն անվանեցինք «**ոչ ինքնուրույն-կիսանկախ ժանր**»:

6. Հիշատակարանը որպես գրական ժանր դրսևորում է հետևյալ առանձնահատկությունները, որոնցով այն առանձնանում և իր ուրույն տեղն է զբաղեցնում հայ միջնադարյան գրականության ժանրերի շարքում. թեմատիկ (միաժամանակ նաև կառուցվածքային), կիրառության ոլորտի առանձնահատկություններ, ոճային, ձևային առանձնահատկություններ և դրսևորումներ (գրչի լեզուն, հիշատակարանը՝ որպես խորհուրդ-խրատ, արձակ կամ չափածո

բնույթը, ծածկագիր, կադասարային հիշատակարանները, հիշատակարանի տեսակներն ըստ հեղինակների):

7. Կադասարային հիշատակարանները ունեն աղբյուրագիտական նշանակություն. այդ հիշատակարանների հավաքման, դասդասման և ձեռագրագիտական հետազոտության արդյունքում հնարավոր կլինի պարզել տվյալ ձեռագրի գրչի անձը, գրչության կոնկրետ վայրը և այլ ձեռագրագիտական ու բանասիրական տարաբնույթ հարցեր: Կան ոչ միայն ձեռագրական հիշատակարանների, այլև արձանագրություն-հիշատակարանների օրինակներ՝ հուշաղբյուրի, գավաթի վրա գրելու համար նախատեսված:

8. Գրառաջքները, որոնց՝ մեզ հայտնի հնագույն նմուշները ԺԳ դարի բանաստեղծ Հովհաննես Երզնկացու գրչին են պատկանում, ստեղծված են տարբեր անձանց ուղղված գրությունների սկզբում դրվելու համար: Այս գրվածքները հայերեն ձեռագրերում հանդիպում են շարքերով կամ խմբերով, հաճախ արտագրված են մեկը մյուսից, սակայն չկա գրառաջքային մի շարք, որ նույնությամբ սկզբունքորեն կրկնվի գոնե երկու ձեռագրում, հերևաբար գրառաջքային խումբը անկայուն է, և մեկ բնագրական միավոր համարվել չի կարող:

9. Գրառաջքի գլխավոր ժանրային հատկանիշը **թեմատիկ առանձնահատկությունն է՝** ուղղված են հասարակության մեջ տարբեր դեր և դիրք ունեցող մարդկանց, բովանդակությունը՝ գովաբանական տեքստ: Գրառաջքները ունեն նաև **կիրառության ոլորտի** առանձնահատկություն՝ ստեղծված են հիմնականում այլ ժանրի մաս դառնալու նպատակով, լինում են **արձակ և չափածո՝** հնագույն ձեռագրերում գերիշխում են արձակ գրառաջքները, իսկ ԺԶ-ԺԷ դդ. սկսած՝ չափածոները:

10. Գրառաջքը միայն իր խմբի կամ փնջի մեջ է պահպանում ժանրային անկախությունը, որը կորցնում է թղթին (կամ այլ գրության) միանալիս՝ կոչվելով թուղթ (կամ տվյալ գրության անվանումն է ստանում), ուստի և դառնում է **«ոչ ինքնուրույն-կախյալ»** ժանր:

11. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են ԺԳ-ԺԵ դարերում գրված, գրառաջքներ ունեցող 12 ձեռագիր (ԺԲ և ավելի վաղ դարերից չկան), Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության ձեռագրական հավաքածուում ԺԴ դարի 1 ձեռագիր, հետագա դարերում այս թիվը զգալիորեն մեծանում է: ԺԲ և ավելի վաղ դարերի ձեռագրերում գրառաջքի բացակայությունը և այլ ժանրերի սակավ հանդես գալը բացատրվում է ոչ թե այդ ժանրերի պակաս գորածածություն կամ տարածում ունենալու, այլ նշված դարերից ձեռագրեր քիչ հասնելու հանգամանքով:

12. Գրառաջքի և հիշատակարանի ժանրային կապը համանման ժանրային բնույթն է՝ երկուսն էլ ոչ ինքնուրույն գրական ժանրեր են՝ կախյալ (գրառաջք) և կիսանկախ (հիշատակարան), բացառությամբ այն չափածո ստեղծագործությունների, որոնք որպես տաղ կամ բանաստեղծություն կարող են անկախ դրսևորվել:

13. ԺԲ-ԺԵ դարերում ընթրօրինակված Ավետարաններից, Ճառընտիրներից, Ճաշոցներից, Մաշտոցներից գատ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 400-ից ավելի ձեռագրեր պարունակում են հայ միջնադարյան գրականության տարբեր ժանրերի պատկանող երկեր, որոնք ունեն գեղարվեստական արժեք,

ձեռագրերում՝ կանոնավոր դրսևորումներ, պահպանել են ժանրային հիմնական առաձնահատկությունները (պատմագրություն, վարք-վկայաբանություն, թղթեր, շարականներ, ներբողներ, տաղեր և գանձեր, առակներ, Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության»)։ Մեծապես ընդօրինակվել են Շարակնոց ժողովածուները՝ (112 ձեռագիր), ապա՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը (57 ձեռագիր), տաղեր և գանձեր (126 ձեռագրում), թղթեր (54 ձեռագրում) պատմագրության ժանրին պատկանող երկեր (54 ձեռագիր), հնչպես նաև առակներ (11 ձեռագիր), ներբողներ (3 ձեռագիր) պարունակող ժողովածուներ։ Ժանրերի բազմազան ձեռագրական այս պատկերը վկայում է, որ խնդրո առարկա ժանրերը ԺԲ-ԺԵ դդ. առաջ էլ արդեն լայնորեն կիրառվել են։

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ
ՇԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.**

1. Գրական ժանրերը ԺԲ. դարի ձեռագիր մատյաններում, «Հայագիտական հանդես», Հ^մ 1 (35), Երեւան, 2017, էջ 87-91:
2. Հանելուկի ժանրը Հայսմավուրջ ժողովածուներում, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2021, Հ^մ 31, էջ 171-180:
3. Որոշ յուրօրինակ կաղապար-հիշատակարաններ հայերեն ձեռագրերում «Գիտական Արցախ», 2022, Հ^մ 2 (13), էջ 156-163:
4. Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ, «Բանբեր Մատենադարանի», 2022, Հ^մ 33, էջ 91-104:
5. The Genre of the Graġajk ' in Armenian Manuscripts, «Սիոն», 2022, Ապրիլ-Հուլիս, թիվ 4-7, էջ 176-182:
6. Արցախում ԺԳ. դարում գրուած ձեռագրերը, Արցախի հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները, 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով, 14-17 սեպտեմբերի 2017 փ., Արցախ (ԼՂՀ) ք. Ստեփանակերտ, Նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 250-255:
7. Գրառաջքի գրական տեսակի ժանրային առանձնահատկությունները, Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ, Մատենադարանի երիտասարդ գիտաշխատողների միավորում, Երևան, 2018, էջ 306-315:
8. Գրառաջք-հիշատակարան ժանրային առնչությունները հայ միջնադարյան մատենագրության մեջ, Լևոն Խաչիկյան. հարյուրամյակ (Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի, 28-30 հունիսի, 2018 թ.), Մատենադարան, Երևան, 2019, էջ 81-89:

Овсанна Сениковна Хачатрян

Средневековые литературные жанры в рукописях XII-XV веков из Маштоца Матенадарана

10.01.01.-Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности «Армянская средневековая и новая литература».

Защита состоится в 21 февраля 2025г., в 12:30, на заседании специализированного совета КВОН 003 по специальности «Литературоведение», действующего при Институте литературы имени М. Абегамяна НАН РА.

Адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института литературы имени М. Абегамяна.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению средневековых литературных жанров, содержащихся в рукописях XII-XIII веков, хранящихся в Матенадаране Месропа Маштоца. Большинство этих жанров всесторонне изучено, однако остаются неизученные вопросы, требующие дальнейшего исследования. В ходе исследования значительное внимание было уделено этим вопросам, в частности, уникальным проявлениям некоторых жанров, таких как *кафа* в Гандзаране и загадка в *Йайсмавурке*, а также изучению особенностей менее изученных жанров, а именно колофона и *гграджка*. Целью данной диссертации является, прежде всего, выявление жанров армянской средневековой литературы в рукописях, созданных в XII-XV веках, путем комбинаторного, сравнительного анализа рукописных и печатных первоисточников и исследований. Цель работы - рассмотреть неизученные проявления и особенности литературных жанров в рукописях, а также определить жанровые особенности литературных типов, которые не были всесторонне изучены.

Исследовательские проблемы диссертации состоят в следующем:

1. Проанализировать сочетание двух жанров - жития и загадки - в сборнике *Йайсмавурк*, исследовать проблему жанровых взаимоотношений, выявить цель включения загадки в эти сборники.

2. Анализ жанровых особенностей гандзаранской *кафы* с акцентом на изучение жанровых связей между *гандзом* и *кафой*.

3. Исследование вопросов, связанных с периодом и авторами *кафы* в *Гандзаранском* сборнике.

4. Проанализировать жанровые особенности колофона как жанра, занимающего особое место в армянской средневековой литературе.

5. Показать важность стандартизированных колофонов для решения различных вопросов, связанных с рукописями.

6. Провести комплексный анализ жанра *гграджка*, выявив его жанровые особенности и продемонстрировав его существование как отдельного жанра в армянской средневековой литературе.

7. Исследовать жанровые взаимоотношения *гграджка* и колофона.

8. Использование рукописей Маштоца Матенадарана (как крупнейшего собрания армянских рукописей) для исследования общего жанрового ландшафта армянской средневековой литературы в рукописях XII-XV веков.

Актуальность темы связана с широким пониманием ряда средневековых жанров, которые также проявляются в границах других жанров. В частности, систематическое изучение *кафы* и загадки, а также *гараджка* и колофона на основе рукописей позволяет шире рассмотреть практическую сферу применения средневековых жанров в тематических и дидактических рамках. Оно также показывает, что средневековый литературный процесс, несмотря на следование жанровым условностям и сохранение христианского «этикета» (термин Д. Лихачева), характеризовался изменчивостью и развитием. Исследование написано с использованием методов историко-сравнительного и компаративного анализа. На основе рукописных и печатных источников, а также опубликованных исследований мы стремились выявить неизученные аспекты и проявления исследуемых жанров, рассмотреть и классифицировать особенности литературных жанров, которые до сих пор не получили всестороннего освещения.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, в котором обобщены результаты исследования и теоретические выводы, а также библиографического списка источников, использованных в работе.

Во введении представлена общая характеристика диссертации, обозначены цель и задачи исследования, актуальность и практическая значимость темы, ее разработанность и научная новизна, а также методологические основы и структура исследования. Кроме того, дается обзор использованных источников и литературы.

В первой главе, под названием «Загадка и кафа как жанры с уникальными проявлениями в рукописях XII-XIII веков», рассматриваются жанры загадки в *Йайсмавуркских* сборниках и жанр *кафы* в Гандзаранских сборниках. Два значимых и широко изученных в армянской средневековой литературе жанра - загадка и *кафа* - наряду с традиционными формами и ролями демонстрируют в рукописях уникальные проявления и функции. Жанр загадки дошел до нас не только в виде отдельных сборников и рукописей, называемых «Антологиями», но и в составе сборников *Йайсмавурка*, где он сочетается с жанром жития. Жанр *кафа*, первоначально появившийся в прозаических произведениях, встречается и в сборнике «Гандзаран», где он связан с понятием *гандз*.

Во второй главе «Колофон как жанр в средневековой литературе (в рукописях XII-XIII веков)» представлена общая характеристика колофона и рассматриваются его жанровые особенности.

В третьей главе «Жанр *гарайка* как жанр средневековой литературы (в рукописях XII-XIII веков)» дается общее описание жанра *гараджка*, исследуются его жанровые особенности и рассматриваются жанровые связи между *гараджком* и колофоном.

В четвертой главе «Другие средневековые литературные жанры в рукописях XII-XIII веков (общий обзор)» дается общая характеристика жанров историографии, жизнеописания (агиографии), письма, гимнов, песен, *гандз*, панегириков, произведения «Книга плача» Григория Нарекаци и жанра басни, а также рассматривается их включение в рукописи XII-XIII веков.

В заключении обобщены основные выводы диссертации.

Ovsanna Senik Khachatryan
**Medieval Literary Genres in the Manuscripts of the 12th to 15th Centuries at
the Mashtots Matenadaran**

(Specialty Code: 10.01.01) - The abstract of the dissertation for claiming the degree of Candidate of Philological Sciences in the specialization “Armenian medieval and modern literature”.

The thesis defence is scheduled for February 21, 2025, at 12:30 p.m. It will take place during the meeting of the 003 Specialized Council of Literature Studies at the Institute of Literature, named after M. Abeghyan, under the HESC of the Republic of Armenia.

Address: 0015, Yerevan, 15 Grigor Lusavorich str.

SUMMARY

The dissertation is dedicated to the research of medieval literary genres contained in the manuscripts of the 12th-13th centuries held at the Mesrop Mashtots Matenadaran. Most of these literary genres have been thoroughly studied; however, several unexplored issues still require further investigation. This research emphasizes these issues, particularly the unique features of specific genres, such as the *kafa* in Gandzaran and the riddle in Yaysmavurk. It also focuses on the genre-specific characteristics of less explored genres, namely the colophon and the *grarajk*. The primary objective of this dissertation is to identify the genres of Armenian medieval literature in manuscripts copied between the 12th and 15th centuries. This will be achieved through a combinatory, comparative analysis of manuscript and printed primary sources, as well as relevant studies. Additionally, the dissertation aims to examine previously unexplored manifestations and characteristics of these literary genres in the manuscripts and to define the unique features of literary types that have not been comprehensively studied.

The research problems of the dissertation are as follows:

1. To analyze the combination of two genres, life and riddle, within the *Yaysmavurk* collection, investigate the issue of genre relationships, and explore the purpose of the inclusion of the riddle in these collections.
2. The analysis of the genre characteristics of the *Gandzaran kafa* focuses on the genre connections between *gandz* and *kafa*.
3. To investigate the issues related to the period and authors of the *kafa* in the Gandzaran collection.
4. To analyze the genre-specific characteristics of the colophon as a genre with a distinct place in Armenian medieval literature.
5. To demonstrate the importance of standardized colophons in addressing various manuscript-related issues.
6. To conduct a comprehensive analysis of the *grarajk* genre, uncovering its genre-specific characteristics and demonstrating its existence as a distinct genre within Armenian medieval literature.
7. To examine the genre relationships between the *grarajk* and colophon.
8. Using the Manuscripts of the Mashtots Matenadaran (the Largest Collection of Armenian Manuscripts) to Investigate the General Genre Landscape of Armenian Medieval Literature in Manuscripts of the 12th to 15th Centuries.

The relevance of this topic lies in the comprehensive understanding of various medieval genres, which often intersect with one another. A systematic study of manuscripts focused on forms such as the kafa and riddle, in addition to grarajk and colophons, enables a broader exploration of medieval genres within thematic and didactic contexts. This examination illustrates that the medieval literary process, while adhering to genre conventions and maintaining Christian "etiquette" (a term coined by D. Likhachev), was also marked by changeability and evolution.

The study employs historical-comparative and comparative analysis methods. Drawing on both manuscript and printed sources, as well as previously published studies, we aim to identify unexplored aspects and expressions of the literary genres under examination. Our goal is to analyze and classify the features of these genres that have not yet been comprehensively addressed. The dissertation is structured into an introduction, four chapters, a conclusion that summarizes the results and theoretical contributions, and a bibliography of the sources utilized.

The introduction offers a detailed overview of the dissertation, clearly outlining its aims and objectives, as well as the relevance and practical significance of the topic. It discusses the evolution of the research, highlights its academic novelty, presents the methodological foundations and structure of the study, and provides an overview of the sources and literature that have been consulted.

In the first chapter, titled "The Riddle and Kafa as Genres with Unique Manuscript Manifestations in 12th-13th Century Manuscripts," the riddle genre found in the Yaysmavurk collections and the kafa genre in the Gandzaran collections are examined. Both genres hold significant importance and have been extensively studied in Armenian medieval literature, showcasing unique manifestations and functions within manuscripts in addition to their traditional forms and roles. The riddle genre has been preserved through separate collections and manuscripts known as "Anthologies" and also within the Yaysmavurk collections, where it is combined with the genre of Life. Conversely, the kafa genre, which initially appeared in prose works, is also present in the Gandzaran collection, where it is associated with the concept of a gandz.

The second chapter, titled "The Colophon as a Genre in Medieval Literature (in 12th-13th Century Manuscripts)," provides a comprehensive description of the colophon and explores its specific genre characteristics.

The third chapter, titled "The Genre of the Grarajk as a Genre in Medieval Literature (in 12th-13th Century Manuscripts)," offers an overall description of the grarajk genre, details its specific characteristics and investigates the connections between the grarajk and the colophon.

The fourth chapter, titled "Other Medieval Literary Genres in 12th-13th Century Manuscripts (General Overview)," presents a comprehensive overview of genres such as historiography, life-martyrology (hagiography), letters, hymns, songs, gandzs, panegyrics, the Book of Lamentations by Grigor Narekatsi, and the genre of fables, while examining their inclusion in 12th-13th century manuscripts.

The conclusion summarizes the key findings of the dissertation.

